Ռ. ՍՏԻՎԵՆՍՈՆ

ՅԱԽԱԾԱՂԿԻ ՄԵՂՐԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Ռ. ՍՏԻՎԵՆՍՈՆ

ՑԱԽԱԾԱՂԿԻ ՄԵՂՐԸ

ՀՈՅՊԵՏՀՐԱՏ
ՀԱՅԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿՑԱ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1949

Р. СТИВЕНСОН

Вересковый мёд

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1949 г.



Ցախածաղկի հին խմիչքը
Հուշ է դարձել հեռավոր.
Իսկ նա քաղցր է եղել մեղրից,
Ամեն գինուց զորավոր։

Շինում էին այդ խմիչքը
Թզուկները մեղրաբան,
Եփում էին քարայրներում,
Խմում էին ամեն տան։

Շոտլանդական արքան եկավ,
Պատերազմով արյունոտ,
Քշեց այդ խեղճ ցեղն իր երկրից
Դեպի ծովափ քարքարոտ։

Մեղրածաղկի դաշտը դարձավ
Մի ռազմի բեմ ահավոր,
Իրար վրա կուտակվեցին
Դիակները բյուրավոր։

Ամառն եկավ ու վերստին
Ցախածաղիկն եկավ վեր,
Սակայն չկար ոչ մի էակ,
Որ այն մեղրը պատրաստեր։

Լեռների մեջ սիրած երկրի,
Շիրիմներում իրենց մութ,
Անցել էին անվերադարձ
Մեղրագործներն այն հմուտ։

Ու ձի հեծած սեպ ափերով
Թագավորն էր իջնում վար,
Նրա դիմաց ճախրում էին
Ծովաճայեր անհամար։

Լուռ դիտում էր թագավորը
Ու խորհում էր թախծալից.
«Նույն ծաղիկն է ամենուրեք,
Իսկ՝ մենք զրկված ենք մեղրից»։

Հանկարծ նրա զինվորները
Նկատեցին զարմացած,
Միայն երկու հին մեղրագործ
Քարայրի մեջ մնացած։

Ու դուրս եկան ժայռի տակից
Ակնախտիտ լույսի տակ,
Սապատավոր մի ծերունի,
Եվ մի թզուկ պատանյակ։

Բերին նրանց ու կանգնեցրին
Ծովի եզրին առապար,
Բայց ոչ մեկը գերիներից
Չարտասանեց ոչ մի բառ։

Նստած էր իր ձիու թամբին
Թագավորը ահարկու,
Գետնի վրա կանգնել էին
Թզուկները այդ երկու։

Ու որոտաց արքան ցասկոտ.
— Մահ կգտնեք ծովափում,
Եթե չասեք ինչպես էիք
Այն հին խմիչքը եփում։

Բայց լուռ էին հայր ու որդի
Վիհի վրա քարացած,
Վերում անթիվ մեղրածաղիկ,
Վարում ծովն էր կատաղած։

Հանկարծ ծերուկ հայրը խոսեց.
— Լսիր՝ դու ինձ, քաջ արքա,
Թույլ տուր քեզ հետ մենակ խոսեմ,
Որ իմ որդին չիմանա։

Ծերացել եմ. իսկ ծերը մարդիկ
Դողդողում են մահի դեմ.
Կտամ սիրած իմ գաղտնիքը,
Դավով մահը կհաղթեմ։

Ու նա ասաց թագավորին.
— Երկյուղ ունեմ իմ որդուց...
Թե չէ վաղուց ձեզ կասեի
Այն գաղտնիքը հինավուրց։

Տղիս համար մահը փուչ չէ,
Եվ կյանքը չէ բաղձալի.
Նրա առաջ խիղճս դավել—
Այդ է ահա սոսկալին։

Թող կապկապեն նրան ամուր
Ու ծով նետեն փրփրադեզ,
Այն ժամանակ մեղրածաղկի
Հին գաղտնիքը կասեմ ձեզ։

Շոտլանդական մի հաղթ զինվոր
Որդուն իսկույն կապկապեց
Եվ այն բարձր ժայռի գլխից
Դեպի ծովը շպրտեց։

Լափեց ահեղ ծովը նրան,
Հանգեց վերջին կանչն անբիծ...
Հառաչանքով արձագանքեց
Հայրը նրան քարափից։

— Ճիշտ խոսեցի, շոտլանդացիք»
Մեծ վտանգը տղաս էր,
Նա չահել էր, սոսկում էի
Թե գաղտնիքըս նա կասեր։

Այժմ մահը ահավոր չէ.
Մեռնի ինձ հետ թող անգին
Նվիրական իմ գաղտնիքը—
Ցախսածաղկի մեղրը հին։

Փոխադրեց՝ ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ
Թարգմ. խմբագիր՝ Ա. ԹԱՄԱՉՅԱՆ

Վ. 00183, պատվեր 767, տիրաժ 6000
Հանձնված է արտադրության 30/XI 48 թ.
Ստորագրված է տպագրության 6/I-49 թ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատարակչ. Վարչության № 1 տպարան Երևան,
Լենինի № 65, 1918 թ.